# Պարույր Սևակ

## Որդին

Նա անգո՛ւթ էր կռվում, գոտեմարտում՝ դաժան
Մոլեգնորեն էր նա ոսոխներին ջարդում,
Թշնամու դեմ չուներ խղճմտանքի նշան,
Ու բարության նշույլ չուներ սրտում:
Եվ նա մի օր ընկավ մահով հերոսական,
Թշնամու շարքերում - մեր դիրքերից հեռու...
Սակայն մահից հետո նրա մայրը, երկա՜ր,
Դեռ շարունակ որդուց նամակ էր ստանում...
...Պառավն ինչպե՞ս զգար, ո՞նց հասկանար արդյոք,
Որ զինվորը դաժան, նո՛ւյն իր բարի որդին,
Գոտեմարտից առաջ իր սեփական ձեռքով
Բացիկներ էր գրել ու նամակներ անթի՛վ...
Եվ մինչ ուրախության զուլալ իր արցունքով
Սփոփվում էր մայրը, որ ապրում է որդին,
Ռուս մուժիկ մի ծեր, դողդողացող ձեռքով,
Վշտի արտասուքը քթարմատին,-
Ծրարների վրա նո՛ւյն հասցեն էր գրում,
Միայն... միշտ դնելով նոր ամսաթիվ...

01.IX.1947թ.
Երևան